ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

(Պարբերական գիտական ժողովածու)

Գիրք 11

Երևան
«ՕՐ–ԴԱՐ» հրատարակչություն
2018

ISSN 1829-4650

Ժողովածուն հրատարակության է երաշխավորվել Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

ԷԴՈՒԱՐԴ ՕՐԴՅԱՆ (նախագահ), տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԱՐՄԵՆԱԿ ԴԱՐԲԻՆՅԱՆ (փոխնախագահ), տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՎԱՐԴԱՆ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԱՇՈՏ ԲԱՅԱԴՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՀԱՅԿ ՕՐԴՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու
ՀԱՅԿ ՂԱԶԱՐՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
ՄԱՐԻՆԵ ՀԱՅՐԻՅԱՆ (պատասխանատու քարտուղար), տնտեսագիտության թեկնածու

Պատասխանատու խմբագիր՝

ԼԱՎՐԵՆՏԻ ՄԻՐԶՈՅԱՆ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ: Պարբերական գիտական ժողովածու / Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտ : Խմբ. խորհ. – *Եր.: «ՕՐ-ԴԱՐ» հրատարակչություն, 2018.*
Գիրք 11. - *332էջ:*

Ժողովածուում ներառվել են տնտեսության զարգացման և կառավարման բարելավման արդի հիմնախնդիրների լուծմանն ուղղված գիտական հոդվածներ:

Այն կարող է օգտակար լինել հանրային և կորպորատիվ կառավարման մարմինների մասնագետներին, գիտական աշխատողներին, դասախոսներին, ասպիրանտներին և մագիստրանտներին:

© Օր-Դար, 2018

ՎԱՐՍԵՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Անվճարունակության կանխարգելմանն ուղղված միջոցառումներ. սանացիա

Կազմակերպությունների՝ որպես տնտեսության առանցքային կազմակերպական օղակի, անվճարունակ դառնալու հանգամանքը պայմանավորված է դրանց իմունային համակարգի անբավարարությամբ: Վերջինս դրսևորվում է մրցակցային բնականոն զարգացումների հորձանուտում՝ գործարարությունում մնալու կարողությամբ, որն էլ, իր հերթին, հետևանք է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ խտրական ոչ նպաստավոր պայմանների: Այդ պայմանների շարքում են, նախևառաջ, տնտեսաիրավական կարգավորումները: Ուստի, հիմնախնդրի՝ կազմակերպությունների սնանկության կանխարգելման, օրենսդրական և կառուցվածքային բարելավումների վերաբերյալ բավարար լուծումների առաջադրումը խիստ կարևորվում է: Կազմակերպությունների անվճարունակության կանխարգելումը տնտեսության ֆինանսական կայունության և տնտեսապես ակտիվ գործունեության կարևոր նախապայմաններից է: Անվճարունակության կանխարգելմանն ուղղված միջոցառումներից կարելի է առանձնացնել պետական բյուջեից և օտարերկրյա ներդրումներից հատկացումները, պարտապանների հետ փոխշահավետ համաձայնագրերի կնքումը, այդ թվում նաև երաշխիքների, վարկերի տրամադրումը և օրենքով սահմանված կարգով սուբսիդավորումը:

Կազմակերպությունների, ֆինանսապես հզոր բանկերի սնանկացումը կանխելու կամ արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կիրառվող ծրագրերից է նաև **սանացիան** (Sanatio

/լատ./ - բուժում, առողջացում), որն իրենից ներկայացնում է միջոցառումների համակարգ՝ ուղղված նոր բաժնետոմսերի թողարկման կրճատմանը, դրանց փոխանակմանը, սուբսիդիաների, ինչպես նաև վարկերի, արտոնյալ փոխառությունների տրամադրմանը:[1] Սանացիայի ընթացակարգերն անհրաժեշտ են այն դեպքում, երբ կազմակերպության ակտիվները կարող են գործադրվել միայն նեղ մասնագիտական ուղղություններով, և դրանց վաճառքը այլ գործարարությունում օգտագործելու նպատակով անհնար է, ինչը բնորոշ է արդյունաբերական կազմակերպություններին: Դա ստեղծում է գործող կազմակերպության կապիտալացման մակարդակի բարձրացում նրա գույքի արժեքի համեմատ, երբ գույքն առանձին է վաճառվում: Ներկայում սնանկության գործերը և վճիռները վճռաբեկության կարգով վերանայումից և բեկանումից հետո քննվում են միանձնյա: Ըստ «Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի՝ 2019 թ. հունվարի 1-ից գործելու են սնանկացման դատարանները:[2]

Ինչպես հայտնի է՝ ֆինանսական առողջացման ծրագիր է համարվում պարտապանի վճարունակությունը վերականգնելու նպատակով նրա նկատմամբ կիրառվող՝ օրենքով չարգելված միջոցառումների համալիրը, որի արդյունքում պարտապանը չի լուծարվում:[3] Հետևաբար, ֆինանսական առողջացման ծրագիրը, որը մշակվում է ՀՀ օրենսդրությամբ, պետք է ներառի պարտատերերի նկատմամբ պարտավորությունների մարման ժամանակացույցը, վճարումների կատարման կարգը, պարտապանին

---

[1] http://www.armdict.com/dictionary/foreign-languages,19.02.2018թ. :

[2] «Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ, https://www.e-draft.am/projects/442, 22.02.2018 թ.:

[3] ՀՀ օրենքը «Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=65019, 21.02.2018 թ.:

պարտավորություններից ազատելու, վճարունակությունը վերականգնելու ծրագրերի իրականացման ժամկետները: Կազմակերպության ֆինանսական առողջացմանն ուղղված ֆինանսական հոսքերի կառավարման տնտեսական արդյունավետության բարձրացումը, որը ներառված է սնանկացման և սանացիայի ընթացակարգերում, ապահովվում է արդյունավետ հակաճգնաժամային կառավարման կառուցակարգերի ստեղծմամբ, որոնց տարբերակիչ առանձնահատկություններն են՝

- անվճարունակության ախտորոշման մեթոդաբանության կատարելագործումը՝ ակտիվներով պարտավորությունների ապահովման ցուցանիշի տարբերակում, ձեռնարկության գործունեության արտաքին ու ներքին պայմանների ուսումնասիրություն պարբերաշրջանային զարգացման և ցուցանիշների փոփոխման հաշվարկով,
- տնտեսական պայմանների առողջացումը (հարկային վճարումների դադարեցում առողջացման ընթացքում, վարկերի տրամադրում վերաֆինանսավորման տոկոսադրույքով և այլն),
- իրավական կարգավորման կատարելագործումը (անվճարունակության և սնանկացման ճշգրտված հասկացությունների ամրագրում, պարտքի ամբողջական գումարի վերականգնում և այլն),
- կառավարիչների գործունեության կազմակերպման արդյունավետության բարձրացում, այն է՝ աշխատանքի վճարման համակարգի ընտրություն և սկզբունքների փոփոխություն, ֆինանսական պատասխանատվության վերականգնում գործունեության արդյունքների հաշվին՝ դրա պահպանման համակարգի ստեղծմամբ,
- անվճարունակ ձեռնարկատերերի աշխատակիցների սոցիալական պաշտպանության մակարդակի բարձրացում:

Սնանկացման վերակազմակերպման և սնանկացման ընթա-

ցակարգերի միջև ընտրությունը պետք է իրականացվի եկամուտների գնահատականի չափանիշի հիման վրա՝ ձեռնարկության ընթացիկ գործունեությունից ստացված և դրա մեծության համադրումով ձեռնարկության ակտիվների լիկվիդացիոն արժեքի հետ: Վերջինս կարող է հաշվարկվել դրանց մաս-մաս վաճառքից: Բացի այդ, անհրաժեշտ է կատարել վարկատուների պահանջների մշտադիտարկում և ընթացիկ ծախսերի վերահսկում, ինչը կառավարչին թույլ կտա կայացնել հիմնավորված որոշումներ և բացահայտել վարկատուների պահանջների բավարարման հնարավորությունները:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի վերլուծություն: «Սնանկության մասին» ՀՀ օրենքն իրականացնում է երկու առաքելություն՝ կանխարգելել իմունային անբավարարություն ունեցող «հիվանդ» կազմակերպությունների սնանկացումը, իսկ արդեն սնանկության փուլում հայտնված կազմակերպություններին՝ հեռացնել տնտեսական շրջանառությունից: Այլ կերպ, նշանակում է, որ պետք է լուծարել այն պարտապաններին, ովքեր դադարեցրել են իրենց գործունեությունը և առողջացնել այն պարտապաններին, որոնք ժամանակավորապես հայտնվել են անվճարունակության կարգավիճակում: Հարկ է նշել, որ օրենքի սուբյեկտներ են հանդիսանում ՀՀ տնտեսավարող սուբյեկտները և ՀՀ քաղաքացիները[1], և օրենքի յուրաքանչյուր փոփոխություն անմիջական ազդեցություն է ունենալու երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա:

Սնանկության ինստիտուտը պարբերաբար փոփոխվող ինստիտուտ է, և նրանում կատարվող յուրաքանչյուր նորամուծություն ցանկալի կլինի՝ բարելավվի այնպես, որ համապատասխանի ՀՀ գործնական կյանքի միջավայրին՝ հաշվի առնելով

[1] ՀՀ օրենքը «Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=65019, 21.02.2018 թ.:

օրենսդրական ակտերին ներդաշնակեցնելու պահանջը: «Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի (այսուհետև՝ Օրենքի նախագիծ) քննական վերլուծությունը թույլ է տալիս ամրագրել, որ նախագիծն ակնկալում է սնանկության վարույթն ավարտել ֆինանսական ամջողջացմամբ, սակայն, իրականում, օրենքի նախագիծը մասամբ բացառում և դժվարեցնում է ֆինանսական առողջացման ծրագիրը: Կարծում ենք, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի ցանկացած նորովի վերլուծությունը և ներկայացումը պետք է նպատակ ունենա բարելավելու տվյալ ոլորտի գործարար արդյունավետությունը:

Հարկ է նշել, որ օրենքի նախագծում գլխավոր շեշտը դրվում է կառավարչի իրավասությունների և լիազորությունների սահմանափակումների վրա: Նկատենք, որ օրենքի նախագծի նոր մշակված տարբերակում ամրագրված է այն սկզբունքը, որ կառավարիչը կախման մեջ է պարտատերերից, չնայած նախկինում նշվում էր, որ նա պետք է լինի անկախ, պահպանի պարտատերերի շահերը և միևնույն ժամանակ պաշտպանի պարտապանների իրավունքները: Այս գործոնն առաջին հայացքից թվում է, թե սահմանափակում է կառավարիչների իրավասությունները: Սակայն սնանկության թափանցիկ և անկողմնակալ գործընթացի համար կարևոր նախապայման է. կառավարիչ-պարտատեր երկուստեք համագործակցությունը, ինչը չի խոչընդոտի կառավարչին իր իրավասությունների լիակատար կատարմանը և ինքնուրույն որոշումների կայացմանը:

Օրենքի նախագիծը հիմնվում է այն կանխադրույթի վրա, որ կազմակերպություններն ավելի հաճախ ֆինանսապես կառողջանան, իսկ սնանկացման դեպքերը կկրճատվեն: Նախատեսվող փոփոխությունները հստակեցնում են կառավարիչների կողմից կատարվող որոշ գործողությունների ժամկետները, որոնք դեռևս

սահմանված չեն գործող օրենքում: Թեև ընթացակարգերի ժամկետների հստակեցումը դեռևս չի ենթադրում դրանց կիրառությունը գործնական կյանքում. այն վերաբերում է գույքագրման, ֆինանսական վիճակի վերլուծության, գնահատման, և պարտապանի գույքի վաճառքի ներկայացման գործընթացներին: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ գործընթացի ողջ պատասխանատվությունը կրում է սնանկության կառավարիչը, և տարբեր գերատեսչությունների, դատական համակարգի միջամտությամբ սնանկության վարույթի ձգձգման ծանրաբեռնվածությունը կրում է կառավարիչը:

Օրենքի նախագիծը ենթադրում է, որ սնանկության գործով կառավարիչները հնարավորություն ունեն ավտոմատ կարգով կամ էլեկտրոնային եղանակով ստանալ տեղեկատվություն, որը խթան կհանդիսանա սնանկության գործընթացի արդյունավետ ավարտի և ժամկետների կրճատման համար:

Օրենքի նախագծում նշվում է, որ ՀՀ արդարադատության նախարարության արտաբյուջետային հաշվին կատարվում է վճարում սնանկության կառավարիչներին հաշվառելու համար: Ի դեպ, հարկ է նշել, որ վճարումը ֆիզիկական անձանց համար նվազագույն աշխատավարձի տասնապատիկն է կազմում, իսկ աուդիտորական կազմակերպությունների համար քսանապատիկի չափով: Նկատենք, որ վճարման նման համադրությունը հակասական է, քանի որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքը հիմնված է անկողմնակալության և անաչառության սկզբունքների վրա, իսկ այստեղ օրենքը գործում է ի նպաստ աուդիտորական կազմակերպությունների:

Սնանկության գործով վարույթի ժամանակ յուրաքանչյուր կառավարիչ շահագրգիռ է գործը շուտ հասցնել ավարտին և ստանալ իր հասանելիք գումարը: Օրենքի նախագծում կառավարիչների կողմից իրականացվող ծախսերի մասին դրույթներն անտեսված

են: Պետք է հաշվի առնել այն, որ սնանկության գործով կառավարիչների համար նախատեսված չէ ամսական կայուն աշխատավարձ, և վարույթի ընթացքում առաջացած վերադիր ծախսերը կատարվում են անձնական միջոցների հաշվին: Ինչ վերաբերում է վարույթի ժամկետներին, ապա հարկ է նշել, որ պրակտիկայում այն կախված է գործի բարդությունից և արտաքին այլ գործոններից: Կառավարչի յուրաքանչյուր աշխատանք վերահսկվում է դատարանի կողմից, և ժամկետների մասին հավաստի տեղեկատվություն կարող են տրամադրել սնանկության գործերը վարող դատավորները: Փաստորեն, նվազեցնելով սնանկության գործով կառավարչի վարձատրությունը, կարելի է ենթադրել, որ կստեղծվի ոչ բարենպաստ պայմաններ նրանց աշխատանքի և մոտիվացիայի համար, ինչն էլ կխոչընդոտի աշխատանքի արդյունավետությանը:

Օրենքի նախագիծը նախատեսում է սնանկության կառավարիչների վարձատրության նվազում, իսկ ֆինանսական առողջացման դեպքում՝ պարգևատրում: Պետք է նկատենք, որ սնանկ ճանաչված անձի առողջացումը ենթադրում է հիվանդ կազմակերպության առողջացում: Բնական է՝ հարց է առաջանում՝ արդյոք սնանկության կառավարիչների աշխատավարձը պետք է կախված լինի կազմակերպության ֆինանսական առողջացումից՝ հաշվի առնելով նաև այն, որ սնանկության գործն ավարտելու որևէ հստակ ժամկետ չկա: Փաստորեն, այս համատեքստում նախագիծն ուղղված է ՀՀ արդարադատության նախարարության լիազորությունների մեծացմանը: Միաժամանակ, սնանկության կառավարիչը ՀՀ արդարադատության նախարարությանը հաշվետվություն ներկայացնելու պարագայում խախտում է դատարանի անկախությունը, քանի որ հաշվետվությունն ինքնին ենթադրում է դատական գործի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:
Օրենքի նախագծում քննության են առնվել նաև խոշոր հարկ վճարողների սնանկության գործընթացները: Առկա փոփո-

խություններով ակնհայտ է դառնում, որ խոշոր հարկ վճարողների համար անհրաժեշտ են որակավորված կառավարիչներ, աուդիտորական կազմակերպություններ, որոնց գործողությունների պատասխանատվության որևէ նորմ չի բերվում առաջարկվող նախագծում: Հայտնի չէ, թե աուդիտորական կազմակերպության փորձը սնանկության վարույթն իրականացնելիս ուսումնասիրվել է, թե ոչ: Օրենքի նախագծում նվազեցվել է կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության ազդեցությունը սնանկության կառավարիչների գործունեության վրա: Նշենք, որ ներկայում վերահսկողությունն իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարությունը: Պետք է նկատենք, որ, ըստ օրենքի տրամաբանության, կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունը պատրաստակամ է յուրաքանչյուր հարցով օգնել և աջակցել սնանկության գործընթացին, ինչպես նաև պաշտպանել կառավարիչների շահերը: Այդ առումով նպատակահարմար կլիներ, որ նախագիծը պարունակեր այնպիսի դրույթներ, որոնք կսահմանափակեին կոռուպցիոն ռիսկերը: Սնանկության ոլորտում առկա խնդիրների լուծումը թաքնված է կառավարչի վարձատրության կամ խոշոր հարկատուների մասով կառավարչի գործառույթները աուդիտորական կազմակերպություններին պատվիրակելով: Վերջինս պարունակում է շահերի բախման և կոռուպցիոն ռիսկեր: Չնայած գործելով դատարանի հսկողության ներքո՝ առաջին հերթին նվազեցնում ենք կոռուպցիոն ռիսկերը, այնուամենայնիվ, նոր փոփոխությունը, այն է՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից սնանկության կառավարչի գործունեությանը միջամտելը, վերահսկողության կառուցակարգեր է կիրառում սնանկացման գործընթացի բարելավման համար: Միևնույն ժամանակ սնանկության գործընթացի ձգձգման համար կառավարիչը չի կարող պատասխանատու լինել, որ պարտապանը կամ պարտատերը, օգտվելով իրենց իրավունքներից, բողոքարկել

են դատական ակտերը, ինչի հետևանքով սնանկության գործընթացի ժամկետները ձգձգվել են: Կառավարչի համար նման անբարենպաստ պայմաններ ստեղծելու արդյունքում կարող են առաջանալ կոռուպցիան ռիսկեր: Այս դեպքում ցանկալի կլինի կառավարչի վարձատրության տոկոսադրույքը հաշվարկել սնանկության գործի ընթացքում կուտակված գումարից, այլ ոչ թե պարտատերերի բավարարված պահանջի չափից: Չնայած, հարկ է նշել, որ Օրենքի նախագիծը դեռևս չի նախատեսել որևէ բանաձև կամ հաշվարկ, որով հնարավոր կլինի հաշվարկել սնանկության հաշվին առկա գումարը:

Այսպիսով, սնանկության գործընթացի ժամանակ պարտապանի սնանկ ճանաչելու մասին վճիռը և նմանատիպ այլ փաստաթղթեր, որոնք ներկայացվում են պարտապանի կողմից, լիարժեքորեն չեն նպաստում սնանկության վարույթում գույքագրման արդյունավետությանը, մինչդեռ կարելի է համապատասխան ծրագրի միջոցով անարգելք և արագ տեղեկատվություն տրամադրել պարտապանի գույքի կազմի և քանակի մասին, այսինքն՝ կրճատել պարտապանի գործոնը[1]:

Սնանկության կառավարիչների ընտրությունը կատարվում է համակարգչային ծրագրի միջոցով, այնուհետև այդ տվյալները փոխանցվում են ՀՀ արդարադատության նախարարություն (սահմանվում է սպասարկման վճար): Փաստորեն, այստեղ նկատում ենք ՀՀ արդարադատության նախարարության անմիջական միջամտություն և վերահսկողություն, ինչը նպատակ է հետապնդում գործընթացի արդյունավետ ավարտին: Բարձրացնելով սնանկության վարույթի ճկունությունը և այն դարձնելով ավելի մրցակցային՝ պարտատերերը ևս կարող են ներազդել վարույթի վրա:

---

[1] Անհրաժեշտ է իրավական պաշտպանական կառուցակարգերի միջոցով իրականացնել պարտապանի ակտիվների վաճառքի համար պարտատերերի կողմից գործարքի հաստատման (իրականացման) պահանջների քննություն:

Օրենքի նախագծով, ինչպես նշվեց վերևում, նվազեցվում է կառավարիչների վարձատրությունը, քանի որ վերջիններս «մոտիվացված չեն» ֆինանսական առողջացման ավարտով և սնանկության վարույթով ֆինանսական առողջացման տանելը դարձնում է անիրատեսական: Առողջացման ծրագրի իրագործման համար ցանկալի կլինի պետության միջամտությունը և աջակցությունը սնանկության վարույթներով գործերի քանակը հնարավորինս նվազեցնելու և առողջացումների դեպքերն ավելացնելու համար:

Անդրադառնալով կանխամտածված սնանկություններով գործի վարույթին՝ հարկ է նշել, որ այս դեպքում հարուցվում է քրեական գործ, պարտատիրոջ կողմից բացվում է հաշիվ և գանձվում է որոշակի վճար: Վերոգրյալ դրույթների ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ սա հակասում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքին և պարունակում է կոռուպցիոն ռիսկ: Կանխամտածված սնանկության ժամանակ առաջին հերթին վնաս է հասցվում հենց սնանկ ճանաչված ընկերությանն ակտիվների կանխամտածված նվազեցման կամ պարտավորությունների ավելացման միջոցով, որի հետևանքով կազմակերպությունը չի կարողանում կատարել իր պարտավորությունները, և դրամական բոլոր մուտքերը ուղղվում են սնանկության հատուկ հաշիվ: Այսինքն՝ մի պարտատիրոջ մոտ պարտքը մարվում է, մյուսի մոտ՝ ոչ:

Այսպիսով, ընդհանրացնելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի դրույթների քննական վերլուծությունը, պետք է նկատել, որ նախագծի լրամշակման համար անհրաժեշտ է ստեղծել մասնագետների խումբ, որտեղ ներգրավված կլինեն սնանկության գործեր քննող դատավորներ, սնանկության գործով կառավարիչներ և այնպիսի մասնագետներ, ովքեր առավել սերտ են առնչվում տվյալ օրենքի շրջանակներում իրականացվող խնդիրներին: Շատ կարևոր են գնահատումները, թե փոփոխված նոր համակարգը ինչ

տնտեսական արդյունք կապահովի, ինչ կարձանագրի երկրի սոցիալ-տնտեսական, իրավական և դատական համակարգի վրա: «Սնանկության մասին» ՀՀ օրենքում ցանկացած փոփոխություն կամ լրացում պետք է ուղղորդվի այնպիսի դրույթների կատարելագործմանը, որոնք հնարավորություն կտան սնանկության վարույթի մասնակիցներին առավելագույնս պաշտպանել իրենց իրավունքները, կատարել իրենց պարտականությունները, իսկ ներմուծված նորմերը կիրառման տեսանկյունից՝ լինեն ողջամիտ: [1]

ՎԱՐՍԵՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ասպիրանտ

ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Երկրի տնտեսության ֆինանսական կայունության ապահովման գործառույթներից են կազմակերպությունների սնանկացման կարգավորումն ու կառավարումը: «Սնանկության մասին» ՀՀ օրենքի նախագծում կատարված լրացումները նոր մոտեցումներ են պարունակում ներկայիս տնտեսական անկատարությունները շտկող տնտեսաիրավակարգավորումների միջոցով հավասարակշռված լուծումներ գտնելու առումով:

Բանալի բառեր. սնանկության գործով կառավարիչ, սանացիա, ֆինանսական կայունություն, կոռուպցիոն ռիսկ:

---

[1] Հոդվածը տպագրության է երաշխավորել **տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյանը,** գրախոսել՝ **տ.գ.դ., պրոֆ. Վ. Բոստանջյանը:**

ВАРСЕНИК САРГСЯН
соискатель факультета экономики и менеджмента
Ереванского государственного университета

ОСНОВНЫЕ ВОПРОСЫ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ИНСТИТУЦИОНАЛЬНЫХ И ЗАКОНОДАТЕЛЬНЫХ МЕТОДОВ ПРЕДОТВРАЩЕНИЯ НЕПЛАТЕЖЕСПОСОБНОСТИ

Одной из функций обеспечения финансовой стабильности экономики страны является регулирование и управление банкротством организаций. Внесенные поправки и дополнения к законопроекту РА “О банкротстве” содержат новые подходы к поиску сбалансированных решений посредством экономико-правового регулирования, устраняющего нынешние экономические недостатки.

Ключевые слова: менеджер по банкротству, санация, финансовая стабильность, коррупционный риск .

VARSENIK SARGSYAN
Ph.D. Applicant, Yerevan State University, Faculty of Economics and Management

THE INSTITUTIONAL AND LEGISLATIVE IMPROVEMENTS ISSUES OF INSOLVENCY PREVENTION

One of the functions of ensuring financial stability of country is regulating and managing bankruptcy of organizations. The amendments made in the RA draft law on “Bankruptcy”’ contain new approaches in finding balanced solutions through legal adjustments that correct the current economic imbalances

Key words: bankruptcy manager, sanation, financial stability, corruption risk.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 7

ԲԱԺԻՆ 1: *ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ* 8

ՎԱՐԴԱՆ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ, ՄԵԴՐԱԿ ԹՈՓԼԱՂԱԼՅՅԱՆ. Ներդրումային գործունեության ֆինանսավորման հիմնական աղբյուրները և դրանց առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում 8

ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ. Հայաստանն ու Իրանը տարածաշրջանային ինտեգրման նոր պայմաններում 19

ԱՐՏԱԿ ՇԱԲՈՅԱՆ. Տնտեսական մրցակցության պաշտպանության մարմինների իրավասություններ և դրանց արդյունավետ իրականացման հիմնահարցեր 37

ՌՈՄԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ. Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների ժամանակակից համակարգում 46

ԼՈՒՍԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ. ՀՀ գիտական ներուժի զարգացման մարտահրավերներ 57

ԱՆԺԵԼԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ. Տավուշի մարզում զբաղվածության իրավիճակի վերլուծություն 65

ԱՐՓԻՆԵ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ. Գործարար միջավայրի բարելավման մոտեցումները ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման համատեքստում 76

ԼԻԼԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ. Ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների գնահատումը բնակչության կենսամակարդակի բարելավման համատեքստում 84

ՎԱՀԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ. ՀՀ էներգետիկ ոլորտի խնդիրներ և այլընտրանքային էներգիայի աղբյուրներ 91

ԿԱՐԻՆԵ ՀԱՋՅԱՆ. Մեկ շնչի հաշվով ֆինանսավորման հիմնախնդիրները ՀՀ առողջապահության ոլորտում 101

ԽԱՉԱՏՈՒՐ ԻԳԻԹՅԱՆ. Օտարերկրյա ուղղակի ներդրումների և տնտեսության հիմնական ոլորտների կապը և դրա գնահատումը ՀՀ-ում.....113

ԱՐՏԱԿ ՇԱԲՈՅԱՆ, ԱՐՄԱՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ. Սպիրտային խմիչքների ներմուծման և արտադրության մրցակցային խնդիրներ.....120

ԱՆՈՒՇ ՍԱՐԳՍՅԱՆ. ՀՀ բանկերի ակտիվների կազմն ու կառուցվածքը 133

ՏԱԹԵՎԻԿ ՇԱՀԻՆՅԱՆ. Բանկերի և բանկային ծառայությունների առաջացման ու զարգացման միջազգային փորձը 140

ՀՐԱՆՈՒՇ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ. Ագրոբիզնեսի առանցքային բնութագրիչների քննական վերլուծություն 147

ԲԱԺԻՆ **2:** ***ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ*** 159

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՕՐԴՅԱՆ, ԼԻԼԻԹ ԽԱՉԱՏՐՅԱՆ. Ազատ տնտեսական գոտիների ձևավորման և զարգացման խնդիրները ՀՀ-ում.....159

ՆԱՐԻՆԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ. Մոտիվացիայի կիրառման միջազգային փորձը.....180

ԱՐՏԱԿ ՇԱԲՈՅԱՆ, ԱՐՄԱՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ. Պետական աջակցությունը տնտեսավարող սուբյեկտներին և դրա նկատմամբ վերահսկողության իրականացման հիմնահարցերը.....193

ՇԱՀԱՆԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ. Փոքր և միջին կազմակերպությունների զարգացմանն աջակցող ֆինանսական համակարգի խնդիրներ.....202

ԱՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ. Կազմակերպություններում ազգային գործարար մշակույթի ուսումնասիրության ժամանակակից մոդելների առանձնահատկությունները 213

ՌԱՖԱՅԵԼ ՄԱՆՈՒԿՅԱՆ. Պետական կառավարման ապակենտրոնացումն արտասահմանյան երկրներում 225

ԱՆԻ ԴՈԽՈՅԱՆ. Պետական գույքի կառավարման ինստիտուցիոնալ մոտեցումներ 237

ՎԱՐՍԵՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ. Անվճարունակության կանխարգելման կառուցակարգային և օրենսդրական բարելավումների հիմնահարցեր 251

ՄԻՔԱՅԵԼ ՋԱՎԱԴՅԱՆ. Ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարման քաղաքականությունն առևտրային բանկերում 263

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ. Հայաստանում մասնագիտական ուսուցման համակարգի ներկա վիճակը՝ արդյունավետ զբաղվածության ապահովման տեսանկյունից 273

ԿԱՐԻՆԵ ՀՈՒՆԱՆՅԱՆ, ՀԱՅԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ. Գյուղատնտեսության վարման առանձնահատկությունները և զարգացման հիմնախնդիրները ՀՀ Սյունիքի մարզում 283

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ. Արցախի Հանրապետության հյուրանոցային տնտեսության օբյեկտների կայացումն ու առկա վիճակը.....299

ԲԱԺԻՆ **3:** ***ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ***.....308
ՆՇԱՆԱՎՈՐ ՏՆՏԵՍԱԳԵՏ-ԳԻՏՆԱԿԱՆԸ
(ԷԴՈՒԱՐԴ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՕՐԴՅԱՆ – 80) 308